

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարները որոշեցին.

1. Ընդունել Անկախ Պետությունների Համագործակցության Կանոնադրությունը /կցվում է/ եւ առաջարկել այն վավերացման:
2. Մինչեւ սույն Կանոնադրության ուժի մեջ մտնելը Համագործակցությունը գործում է ԱՊՀ շրջանակներում կնքված համաձայնագրերի եւ ընդունված որոշումների համաձայն:

Կատարված է Մինսկ քաղաքում 1993 թվականի հունվարի 22-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Որոշումը ստորագրած պետություններին կուղարկի դրա հաստատված պատճենները:

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ**

Անկախ Պետությունների Համագործակցությունում (այսուհետ՝ Համագործակցություն) կամավոր միավորված պետությունները, հիմնվելով իրենց ժողովուրդների պատմական ընդհանրության եւ նրանց միջեւ ձեւավորված կապերի վրա, գործելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին եւ նորմերին, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը, Հելսինկիի Եզրափակիչ ակտի դրույթներին եւ Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության խորհրդակցության այլ փաստաթղթերին համապատասխան, ձգտելով ընդհանուր ջանքերով ապահովել իրենց ժողովուրդների տնտեսական եւ սոցիալական առաջընթացը, վճռականությամբ լի կյանքի կոչելու "Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին" Համաձայնագրի, այդ Համաձայնագրին կից Արձանագրության, ինչպես նաեւ Ալմաթիի Հռչակագրի դրույթները, զարգացնելով փոխհամագործակցությունը միջազգային խաղաղության եւ անվտանգության ապահովման, ինչպես նաեւ՝ քաղաքացիական խաղաղության եւ միջազգային համաձայնության պահպանման նպատակով, ցանկանալով պայմաններ ստեղծել մասնակից պետությունների բոլոր ժողովուրդների մշակույթների պահպանման եւ զարգացման համար, ձգտելով կատարելագործել Համագործակցությունում համագործակցության մեխանիզմները եւ մեծացնել դրանց արդյունավետությունը, որոշեցին ընդունել Համագործակցության Կանոնադրությունը եւ պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

**ԲԱԺԻՆ 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

**ՀՈՂՎԱԾ 1**

Համագործակցությունը հիմնված է բոլոր նրա անդամների ինքնիշխան հավասարության սկզբունքների վրա: Անդամ պետությունները միջազգային իրավունքի ինքնուրույն եւ իրավահավասար սուբյեկտներ են:

Համագործակցությունը ծառայում է անդամ պետությունների միջեւ բարեկամության, բարիդրացիության, միջազգային համաձայնության, վստահության,

փոխըմբռնման եւ փոխշահավետ համագործակցության հարաբերությունների հետագա զարգացմանը եւ ամրապնդմանը:

Համագործակցությունը պետություն չի եւ չունի վերագրային լիազորություններ:

## ՅՈՒՐԱԾ 2

Համագործակցության նպատակներն են՝

համագործակցության իրականացում քաղաքական, տնտեսական, Էկոլոգիական, մարդասիրական, մշակութային եւ այլ բնագավառներում,

ընդհանուր տնտեսական տարածության շրջանակներում անդամ պետությունների բազմակողմ եւ հավասարակշռված տնտեսական եւ սոցիալական զարգացում, միջպետական կոոպերացիա եւ ինտեգրացիա,

մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ապահովում՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին եւ նորմերին ու ԵԱՀԿ փաստաթղթերին համապատասխան,

համագործակցություն անդամ պետությունների միջեւ միջազգային խաղաղության եւ անվտանգության ապահովման բնագավառում, սպառազինությունների եւ ռազմական ծախսերի կրճատման, միջուկային եւ զանգվածային ոչնչացման գեների այլ տեսակների վերացմանը, համընդհանուր եւ լրիվ զինաթափման հասնելուն ուղղված արդյունավետ միջոցների իրականացում,

աջակցություն անդամ պետությունների քաղաքացիներին միմյանց հետ ազատ կերպով հաղորդակցվելու, շփվելու եւ Համագործակցության տարածքով տեղաշարժվելու գործում,

փոխադարձ իրավական օգնություն եւ համագործակցություն իրավական հարաբերությունների այլ ոլորտներում,

Համագործակցության պետությունների միջեւ վեճերի եւ հակամարտությունների խաղաղ լուծում:

## ՅՈՒՐԱԾ 3

Համագործակցության նպատակների ձեռքբերման համար, անդամ պետությունները, ելնելով միջազգային իրավունքի եւ ՅԵԼՍԻՆԿԻ Եզրափակիչ ակտի հանրաճանաչ նորմերից, իրենց հարաբերությունները կառուցում են փոխկապակցված եւ համարժեք՝ ներքոհիշյալ սկզբունքներին համապատասխան.

անդամ պետությունների ինքնիշխանության, ժողովուրդների ինքնորոշման անբաժան իրավունքի եւ առանց արտաքին միջամտության իր ճակատագիրը տնօրինելու իրավունքի նկատմամբ հարգանքը,

պետական սահմանների անխախտելիությունը, գոյություն ունեցող սահմանների ճանաչումը եւ անօրինական տարածքային ձեռքբերումներից հրաժարումը,

պետությունների տարածքային ամբողջականությունը եւ օտար տարածքի մասնատմանն ուղղված ցանկացած գործողություններից հրաժարումը,

ուժի կամ ուժ կիրառելու սպառնալիքի չկիրառումը անդամ պետության քաղաքական անկախության դեմ,

վեճերի խաղաղ միջոցներով լուծումը այնպես, որ վտանգի տակ չդրվի միջազգային խաղաղությունը, անվտանգությունը եւ արդարությունը,

միջպետական հարաբերություններում միջազգային իրավունքի գերակայությունը, միմյանց ներքին եւ արտաքին գործերին չմիջամտելը,

բոլորի համար առանց ռասայի, էթնիկական պատկանելության, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների տարբերակման մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ապահովում,

Համագործակցության փաստաթղթերով, ներառյալ Կանոնադրությունը, իրենց վրա վերցված պարտավորությունների բարեխիղճ կատարում,

միմյանց եւ Համագործակցության շահերի հաշվառում, իրենց փոխհարաբերությունների բոլոր բնագավառներում, փոխադարձ համաձայնության հիման

վրա, օգնության ցուցաբերում,

Համագործակցության անդամ պետությունների ժողովուրդների խաղաղ կենսապայմանների ստեղծման, նրանց քաղաքական, տնտեսական եւ սոցիալական առաջընթացի նպատակներով ջանքերի միավորում եւ օժանդակության ցուցաբերում, փոխշահավետ տնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցության զարգացում, ինտեգրացիոն գործընթացների ընդլայնում, իրենց ժողովուրդների հոգեւոր միավորում, որը հիմնվում է նրանց ինքնատիպության, մշակութային արժեքների եւ մշակութային փոխանակման բնագավառում սերտ համագործակցության նկատմամբ հարգանքի վրա:

#### ՀՈՂՎԱԾ 4

Անդամ պետությունների համատեղ գործունեության ոլորտներին, որը Համագործակցության շրջանակներում անդամ պետությունների ստանձնած պարտավորություններին համապատասխան իրագործվում է իրավահավասար հիմունքներով ընդհանուր համակարգող մարմինների միջոցով, վերաբերում են.

մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ապահովում, արտաքին քաղաքական գործունեության համակարգում, համագործակցություն ընդհանուր տնտեսական տարածքի, ընդհանուր եվրոպական եւ եվրասիական շուկաների, մաքսային քաղաքականության ձեւավորման ու զարգացման բնագավառներում, համագործակցություն տրանսպորտի, կապի միջոցների զարգացման բնագավառներում, առողջության եւ շրջակա միջավայրի պահպանություն, սոցիալական եւ միգրացիոն քաղաքականության հարցեր, պայքար կազմակերպված հանցավորության դեմ, համագործակցություն պաշտպանական քաղաքականության եւ արտաքին սահմանների պահպանության բնագավառներում:

Սույն ցանկը կարող է լրացվել անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ:

#### ՀՈՂՎԱԾ 5

Համագործակցության շրջանակներում միջպետական հարաբերությունների հիմնական իրավական հիմք են հանդիսանում անդամ պետությունների միջեւ փոխհարաբերությունների տարբեր բնագավառներում կնքված բազմակողմ եւ երկկողմ համաձայնագրերը:

Համագործակցության շրջանակներում կնքված համաձայնագրերը պետք է համապատասխանեն Համագործակցության նպատակներին եւ սկզբունքներին, սույն Կանոնադրությունից բխող անդամ պետությունների պարտավորություններին:

#### ՀՈՂՎԱԾ 6

Անդամ պետություններն օժանդակում են պետական մարմինների, հասարակական միավորումների, տնտեսական կառույցների միջեւ համագործակցությանը եւ կապերի զարգացմանը:

### ԲԱԺԻՆ 2. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

#### ՀՈՂՎԱԾ 7

Համագործակցության հիմնադիր պետությունները նրանք են, որոնք սույն Կանոնադրության ընդունման պահին ստորագրել եւ վավերացրել են 1991 թվականի դեկտեմբերի 8-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագիրը եւ դրան կից 1991 թվականի դեկտեմբերի 21-ի Արձանագրությունը:

Համագործակցության անդամ պետություններ հանդիսանում են այն հիմնադիր պետությունները, որոնք ստանձնում են սույն Կանոնադրությունից բխող պարտավորությունները՝ պետությունների ղեկավարների հորհրդի կողմից այն ընդունելուց մեկ տարվա ընթացքում:

Համագործակցության անդամ կարող է դառնալ նաեւ այն պետությունը, որը կիսում է Համագործակցության նպատակներն ու սկզբունքները եւ ստանձնում է սույն Կանոնադրությունից բխող պարտավորությունները, բոլոր անդամ պետությունների համաձայնությամբ՝ Կանոնադրությանը միանալու միջոցով:

#### ՀՈՂՎԱԾ 8

Պետությունների ղեկավարների հորհրդի որոշման հիման վրա Համագործակցությանը, որպես ասոցացված անդամ, կարող է միանալ այն պետությունը, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեության առանձին ձեւերին՝ ասոցացված անդամակցության մասին համաձայնագրով սահմանվող պայմաններին համապատասխան:

Պետությունների ղեկավարների հորհրդի որոշմամբ Համագործակցության մարմինների նիստերին, որպես դիտորդ, կարող են ներկա լինել այլ պետությունների ներկայացուցիչներ:

Համագործակցության մարմինների աշխատանքներում ասոցացված անդամների եւ դիտորդների մասնակցության հարցերը կարգավորվում են այդ մարմինների ընթացակարգերի կանոններով:

#### ՀՈՂՎԱԾ 9

Անդամ պետությունը իրավունք ունի դուրս գալ Համագործակցությունից: Նման մտադրության մասին անդամ պետությունը դուրս գալուց 12 ամիս առաջ գրավոր ծանուցում է սույն Կանոնադրության ավանդապահին:

Սույն Կանոնադրությունում մասնակցության ժամանակամիջոցում ծագած պարտավորությունները կապում են համապատասխան պետություններին, մինչեւ դրանց լիակատար իրականացումը:

#### ՀՈՂՎԱԾ 10

Անդամ պետության կողմից սույն Կանոնադրության խախտումը, Համագործակցության շրջանակներում կնքված համաձայնագրերից բխող պարտավորությունների կամ Համագործակցության մարմինների որոշումների չկատարումը քննության են առնվում պետությունների ղեկավարների հորհրդի կողմից:

Նման պետության հանդեպ կարող են կիրառվել միջազգային իրավունքով թույլատրելի միջոցներ:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՎՁՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

#### ՀՈՂՎԱԾ 11

Անդամ պետությունները համաձայնեցված քաղաքականություն են վարում միջազգային անվտանգության, զինաթափման եւ սպառազինությունների վերահսկման, զինված ուժերի կառուցման բնագավառներում եւ Համագործակցությունում պահպանում են անվտանգությունը, այդ թվում՝ ռազմական դիտորդների խմբերի եւ խաղաղության պահպանության հավաքական ուժերի օգնությամբ:

#### ՀՈՂՎԱԾ 12

Մեկ կամ մի քանի անդամ պետությունների ինքնիշխանությանը, անվտանգությանը

Եւ տարածքային ամբողջականությանը կամ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնալիքի ծագման դեպքում անդամ պետությունները անմիջապես գործողության մեջ են ներդնում փոխադարձ խորհրդակցությունների մեխանիզմը՝ դիրքորոշումների համակարգման եւ ծագած սպառնալիքի վերացման համար միջոցների ընդունման նպատակով, ներառյալ խաղաղարար գործողությունները եւ, անհրաժեշտության դեպքում, զինված ուժերի կիրառումը՝ ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության իրավունքի իրականացման կարգով:

Չինված ուժերի համատեղ կիրառման մասին որոշումը ընդունում են Համագործակցության պետությունների ղեկավարների հորհուրդը կամ Համագործակցության շահագրգիռ անդամ պետությունները՝ հաշվի առնելով իրենց ազգային օրենսդրությունները:

#### ՀՈՂՎԱԾ 13

Յուրաքանչյուր անդամ պետություն ձեռնարկում է պատշաճ միջոցներ Համագործակցության անդամ պետությունների արտաքին սահմաններում կայուն վիճակ ապահովելու համար: Փոխադարձ համաձայնության հիման վրա, անդամ պետությունները համակարգում են սահմանապահ գործերի եւ այլ իրավասու ծառայությունների գործունեությունը, որոնք հսկողություն են իրականացնում եւ պատասխանատվություն կրում անդամ պետությունների արտաքին սահմանների հատման սահմանված կարգի պահպանման համար:

#### ՀՈՂՎԱԾ 14

Պաշտպանության եւ արտաքին սահմանների պահպանության հարցերով Համագործակցության բարձրագույն մարմինն է պետությունների ղեկավարների հորհուրդը: Համագործակցության ռազմատնտեսական քաղաքականության համակարգումը իրականացնում է Կառավարությունների ղեկավարների հորհուրդը:

Միջազգային համաձայնագրերի իրականացման եւ անվտանգության ու զինաթափման բնագավառում այլ հարցերի լուծման գործում անդամ պետությունների փոխգործակցությունը կազմակերպվում է համատեղ խորհրդակցությունների միջոցով:

#### ՀՈՂՎԱԾ 15

Անդամ պետությունների ռազմաքաղաքական համագործակցության կոնկրետ հարցերը կարգավորվում են հատուկ համաձայնագրերով:

#### ԲԱԺԻՆ 4. ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

#### ՀՈՂՎԱԾ 16

Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր հնարավոր միջոցները հակամարտությունների, առաջին հերթին միջազգային եւ միջկոնֆեսիոնալ հողի վրա ծագած, կանխարգելման համար, որոնք կարող են առաջ բերել մարդու իրավունքների խախտում:

Նրանք, փոխհամաձայնության հիման վրա, միմյանց օգնություն են ցուցաբերում նման հակամարտությունների կարգավորման գործում, այդ թվում նաեւ միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

#### ՀՈՂՎԱԾ 17

Համագործակցության անդամ պետությունները ձեռնպահ կմնան գործողություններից, որոնք ընդունակ են վնաս հասցնել այլ անդամ

պետություններին եւ հանգեցնել հնարավոր վեճերի սրմանը:

Անդամ պետությունները բարեխղճորեն եւ համագործակցության ոգով ջանքեր կգործադրեն իրենց վեճերի արդար խաղաղ լուծման համար՝ բանակցությունների միջոցով կամ ձգտելով վեճի կարգավորման այլընտրանքային ընթացակարգերի մասին պայմանավորվածության:

Եթե անդամ պետությունները վեճը չեն լուծում սույն հոդվածի երկրորդ մասում նշված միջոցների օգնությամբ, ապա նրանք կարող են փոխանցել վեճը պետությունների ղեկավարների հորհրդի քննությանը:

#### ՀՈՂՎԱԾ 18

Պետությունների ղեկավարների հորհուրդը իրավասու է վեճի ցանկացած փուլում, որի շարունակությունը կարող է սպառնալ Համագործակցությունում խաղաղության կամ անվտանգության պահպանմանը, առաջարկվել Կողմերին դրա կարգավորման պատշաճ ընթացակարգ կամ մեթոդներ:

#### ԲԱԺԻՆ 5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

#### ՀՈՂՎԱԾ 19

Անդամ պետությունները համագործակցում են տնտեսական եւ սոցիալական բնագավառներում՝ հետեւյալ ուղղություններով.

շուկայական հարաբերությունների եւ ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի ազատ տեղաշարժման հիման վրա ընդհանուր տնտեսական տարածքի ձեւավորում,

սոցիալական քաղաքականության համակարգում, համատեղ սոցիալական ծրագրերի եւ տնտեսական բարեփոխումների անցկացման հետ կապված սոցիալական լարվածության նվազեցմանն ուղղված միջոցների մշակում,

տրանսպորտի եւ կապի, ինչպես նաեւ էներգետիկ համակարգերի զարգացում, ֆինանսավարկային քաղաքականության համակարգում, անդամ պետությունների առեւտրատնտեսական կապերի զարգացման օժանդակություն, ներդրումների խրախուսում եւ փոխադարձ պաշտպանություն, օժանդակություն արդյունաբերական արտադրանքի եւ ապրանքների ստանդարտացմանն ու սերտիֆիկացմանը,

մտավոր սեփականության իրավական պաշտպանություն, օժանդակություն ընդհանուր տեղեկատվական դաշտի զարգացմանը, համատեղ բնապահպանական միջոցառումների իրականացում, Էկոլոգիական աղետների եւ այլ արտակարգ իրավիճակների հետեւանքների վերացման գործում փոխադարձ օգնության ցուցաբերում,

գիտության եւ տեխնիկայի, կրթության, առողջապահության, մշակույթի եւ սպորտի բնագավառներում համատեղ նախագծերի ու ծրագրերի իրականացում:

#### ՀՈՂՎԱԾ 20

Անդամ պետությունները համագործակցում են իրավունքի բնագավառում, մասնավորապես՝ կնքելով իրավական օգնության ցուցաբերման վերաբերյալ բազմակողմ եւ երկկողմ պայմանագրեր եւ նպաստում են ազգային օրենսդրությունների մերձեցմանը:

Անդամ պետությունների ազգային օրենսդրությունների նորմերի միջեւ հակասությունների դեպքում, որոնք կարգավորում են համատեղ գործունեության ոլորտներում հարաբերությունները, անդամ պետությունները խորհրդակցություններ եւ բանակցություններ են անցկացնում՝ այդ հակասությունների վերացման համար առաջարկությունների մշակման նպատակով:

ԲԱԺԻՆ 6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀՈՂՎԱԾ 21

Համագործակցության բարձրագույն մարմինն է պետությունների ղեկավարների  
խորհուրդը:

Պետությունների ղեկավարների խորհուրդը, որտեղ բարձր մակարդակով  
ներկայացված են բոլոր անդամ պետությունները, քննարկում և որոշում է իրենց  
ընդհանուր շահերի ոլորտում անդամ պետությունների գործունեության հետ կապված  
սկզբունքային հարցերը:

Պետությունների ղեկավարների խորհուրդը նիստի է հավաքվում տարին երկու  
անգամ: Խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել անդամ պետություններից  
մեկի նախաձեռնությամբ:

ՀՈՂՎԱԾ 22

Կառավարությունների ղեկավարների խորհուրդը համակարգում է անդամ  
պետությունների գործադիր իշխանության մարմինների համագործակցությունը  
ընդհանուր շահերի տնտեսական, սոցիալական և այլ ոլորտներում:

Կառավարությունների ղեկավարների խորհուրդը նիստի է հավաքվում տարին չորս  
անգամ: Խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել անդամ պետություններից  
մեկի Կառավարության նախաձեռնությամբ:

ՀՈՂՎԱԾ 23

Պետությունների ղեկավարների խորհրդի և Կառավարությունների ղեկավարների  
խորհրդի որոշումները ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ՝  
միաձայնությամբ: Ցանկացած պետություն կարող է հայտարարել այս կամ այն հարցում  
իր ոչ շահագրգիռ լինելու մասին, ինչը չպետք է դիտվի որպես որոշման ընդունման  
համար խոչընդոտ:

Պետությունների ղեկավարների խորհուրդը և Կառավարությունների ղեկավարների  
խորհուրդը կարող են անցկացնել համատեղ նիստեր:

Պետությունների ղեկավարների խորհրդի և Կառավարությունների ղեկավարների  
խորհրդի աշխատանքի կարգը կարգավորվում է ընթացակարգի Կանոններով:

ՀՈՂՎԱԾ 24

Պետությունների ղեկավարների խորհրդի և Կառավարությունների ղեկավարների  
խորհրդի նիստերում, հաջորդաբար, նախագահում են պետությունների ղեկավարները և  
Կառավարությունների ղեկավարները՝ Համագործակցության անդամ պետությունների  
անվանումների ռուսական այբբենական կարգով:

Պետությունների ղեկավարների խորհրդի և Կառավարությունների ղեկավարների  
խորհրդի նիստերը, որպես կանոն, անց են կացվում Մինսկ քաղաքում:

ՀՈՂՎԱԾ 25

Պետությունների ղեկավարների խորհուրդը և Կառավարությունների ղեկավարների  
խորհուրդը ստեղծում են աշխատանքային և օժանդակ մարմիններ՝ ինչպես մշտական,  
այնպես էլ ժամանակավոր հիմունքներով:

Այդ մարմինները ձևավորվում են անդամ պետությունների համապատասխան  
լիազորություններով օժտված ներկայացուցիչներից:

Այդ նիստերին մասնակցելու համար կարող են ներգրավվել փորձագետներ եւ խորհրդատուներ:

#### ՅՈՒՎԱԾ 26

Համագործակցության առանձին բնագավառներում հարցերի լուծման եւ պետությունների ղեկավարների հորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների հորհրդի համար առաջարկությունների մշակման համար հրավիրվում են համապատասխան պետական մարմինների ղեկավարների խորհրդակցություններ:

Արտաքին գործերի նախարարների խորհուրդ

#### ՅՈՒՎԱԾ 27

Արտաքին գործերի նախարարների խորհուրդը պետությունների ղեկավարների հորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների հորհրդի որոշումների հիման վրա իրականացնում է անդամ պետությունների արտաքին քաղաքական գործունեության համակարգումը, ներառյալ նրանց գործունեությունը միջազգային կազմակերպություններում, եւ կազմակերպում է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համաշխարհային քաղաքականության հարցերով խորհրդակցություններ:

Արտաքին գործերի նախարարների խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է պետությունների ղեկավարների հորհրդի հաստատած Կանոնակարգին համապատասխան:

Համակարգող-խորհրդակցական կոմիտե

#### ՅՈՒՎԱԾ 28

Համակարգող-խորհրդակցական Կոմիտեն Համագործակցության մշտապես գործող գործադիր եւ համակարգող մարմին է:

Ի կատարումն պետությունների ղեկավարների հորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների հորհրդի որոշումների, Կոմիտեն.

առաջարկություններ է մշակում եւ ներկայացնում Համագործակցության շրջանակներում համագործակցության, սոցիալ-տնտեսական կապերի զարգացման հարցերով,

օժանդակում է տնտեսական փոխհարաբերությունների կոնկրետ ուղղություններով պայմանավորվածությունների իրականացմանը,

Պետությունների ղեկավարների հորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների հորհրդի նիստերին ներկայացնելու համար փաստաթղթերի նախագծերի պատրաստման համար կազմակերպում է ներկայացուցիչների եւ փորձագետների խորհրդակցություններ,

ապահովում է պետությունների ղեկավարների հորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների հորհրդի նիստերի անցկացումը,

օժանդակում է Համագործակցության այլ մարմինների աշխատանքներին:

#### ՅՈՒՎԱԾ 29

Համակարգող-խորհրդակցական Կոմիտեն բաղկացած է Համագործակցության անդամ պետություններից յուրաքանչյուրից երկուական մշտական լիազոր ներկայացուցիչներից եւ պետությունների ղեկավարների հորհրդի կողմից նշանակած Կոմիտեի համակարգողից:

Պետությունների ղեկավարների հորհրդի, Կառավարությունների ղեկավարների հորհրդի եւ Համագործակցության այլ մարմինների աշխատանքների

կազմակերպչատեխնիկական ապահովման համար Համակարգող-խորհրդակցական Կոմիտեին կից գոյություն ունի Քարտուղարություն, որը ղեկավարում է Համակարգող-խորհրդակցական Կոմիտեի նախագահի տեղակալը՝ Կոմիտեի համակարգողը:

Կոմիտեն գործում է պետությունների ղեկավարների հորհրդի կողմից հաստատած

Կանոնակարգին համապատասխան:  
Կոմիտեի նստավայրն է Մինսկ քաղաքը:

Պաշտպանության նախարարների խորհուրդ  
Միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարություն

### ՅՈՒՐԱԾ 30

Պաշտպանության նախարարների խորհուրդը հանդիսանում է անդամ պետությունների ռազմական քաղաքականության եւ ռազմական շինարարության հարցերով պետությունների ղեկավարների հորհրդի մարմին:

Միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը իրականացնում է Միացյալ զինված ուժերի, ինչպես նաեւ ռազմական դիտորդների խմբերի եւ Համագործակցությունում խաղաղության պահպանության հավաքական ուժերի ղեկավարումը:

Պաշտպանության նախարարների խորհուրդը եւ Միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը իրենց գործունեությունը իրականացնում են պետությունների ղեկավարների հորհրդի կողմից հաստատած համապատասխան Կանոնակարգի հիման վրա:

Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհուրդ

### ՅՈՒՐԱԾ 31

Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհուրդը հանդիսանում է անդամ պետությունների արտաքին սահմանների պահպանության եւ այդ սահմաններում կայուն իրավիճակի ապահովման հարցերով պետությունների ղեկավարների հորհրդի մարմին:

Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհուրդը իր գործունեությունն իրականացնում է պետությունների ղեկավարների հորհրդի կողմից հաստատած համապատասխան Կանոնակարգի հիման վրա:

Տնտեսական դատարան

### ՅՈՒՐԱԾ 32

Տնտեսական դատարանը գործում է Համագործակցության շրջանակներում տնտեսական պարտավորությունների կատարման ապահովման նպատակով:

Տնտեսական դատարանի վարույթին են վերաբերում տնտեսական պարտավորությունների կատարման ժամանակ ծագող վեճերի լուծումը: Դատարանը կարող է լուծել եւ այլ վեճեր, որոնք նրա վարույթին են հանձնվում անդամ պետությունների միջեւ կնքված համաձայնագրերով:

Տնտեսական դատարանը իրավասու է մեկնաբանել տնտեսական հարցերով Համագործակցության համաձայնագրերի եւ այլ ակտերի դրույթները:

Տնտեսական դատարանը իր գործունեությունն իրականացնում է Տնտեսական դատարանի կարգավիճակի մասին Համաձայնագրին եւ պետությունների ղեկավարների հորհրդի կողմից հաստատված Դատարանի մասին Կանոնադրությանը համապատասխան:

Տնտեսական դատարանի նստավայրն է Մինսկ քաղաքը:

Մարդու իրավունքների հանձնաժողով

### ՅՈՒՐԱԾ 33

Մարդու իրավունքների հանձնաժողովը Համագործակցության խորհրդակցական մարմին է եւ հետեւում է Համագործակցության շրջանակներում մարդու իրավունքների վերաբերյալ անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Հանձնաժողովը բաղկացած է Համագործակցության անդամ պետությունների ներկայացուցիչներից եւ գործում է պետությունների ղեկավարների հորհրդի կողմից հաստատված Կանոնակարգին համապատասխան:

Մարդու իրավունքների հանձնաժողովի նստավայրը Մինսկ քաղաքն է:

Ճյուղային համագործակցության մարմիններ

#### ՀՈՂՎԱԾ 34

Տնտեսական, սոցիալական եւ այլ բնագավառներում համագործակցության մասին անդամ պետությունների միջեւ կնքվող համաձայնագրերի հիման վրա կարող են հիմնվել ճյուղային համագործակցության մարմիններ, որոնք իրականացնում են նման համագործակցության համաձայնեցված սկզբունքների եւ կանոնների մշակում եւ օժանդակում են դրանց պրակտիկ իրագործմանը:

Ճյուղային համագործակցության մարմինները (խորհուրդները, կոմիտեները) կատարում են սույն Կանոնադրությունում եւ նրանց մասին կանոնակարգերում նախատեսված գործառույթներ՝ ապահովելով բազմակողմ հիմունքներով համապատասխան բնագավառներում համագործակցության հարցերի քննարկում եւ լուծում:

Ճյուղային համագործակցության մարմինների կազմի մեջ մտնում են անդամ պետությունների գործադիր իշխանության համապատասխան մարմինների ղեկավարները:

Ճյուղային համագործակցության մարմինները իրենց իրավասության շրջանակներում ընդունում են երաշխավորականներ, ինչպես նաեւ անհրաժեշտ դեպքերում պետությունների ղեկավարների հորհրդի քննության են ներկայացնում առաջարկություններ:

Համագործակցության աշխատանքային լեզուն

#### ՀՈՂՎԱԾ 35

Համագործակցության աշխատանքային լեզուն ռուսերենն է:

### ԲԱԺԻՆ 7. ՄԻՋԻՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

#### ՀՈՂՎԱԾ 36

Միջխորհրդարանական ասամբլեան անց է կացնում միջխորհրդարանական խորհրդակցություններ, քննարկում է Համագործակցության շրջանակներում համագործակցության հարցեր, ազգային խորհրդարանների գործունեության ոլորտում մշակում է համատեղ առաջարկություններ:

#### ՀՈՂՎԱԾ 37

Միջխորհրդարանական ասամբլեան կազմված է խորհրդարանական պատվիրակություններից:

Միջխորհրդարանական ասամբլեայի գործունեության կազմակերպումը իրականացնում է Ասամբլեայի խորհուրդը, որը բաղկացած է խորհրդարանական պատվիրակությունների ղեկավարներից:

Միջխորհրդարանական ասամբլեայի գործունեության ընթացակարգային հարցերը կարգավորվում են նրա Կանոնակարգով:

Միջխորհրդարանական ասամբլեայի նստավայրն է Սանկտ Պետերբուրգ քաղաքը:

### ԲԱԺԻՆ 8. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

#### ՀՈՂՎԱԾ 38

Համագործակցության մարմինների գործունեության ֆինանսավորման ծախսերը բաշխվում են անդամ պետությունների բաժնեմասային հիմունքներով եւ սահմանվում Համագործակցության մարմինների բյուջեների մասին հատուկ համաձայնագրերին համապատասխան:

Համագործակցության մարմինների բյուջեները Կառավարությունների ղեկավարների Խորհրդի ներկայացմամբ հաստատում է պետությունների ղեկավարների Խորհուրդը:

#### ՀՈՂՎԱԾ 39

Համագործակցության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության հարցերը քննարկվում են պետությունների ղեկավարների Խորհրդի սահմանած կարգով:

#### ՀՈՂՎԱԾ 40

Համագործակցության խորհրդակցությունների եւ մարմինների աշխատանքներում անդամ պետությունների ներկայացուցիչների, ինչպես նաեւ փորձագետների եւ խորհրդատուների մասնակցության հետ կապված ծախսերը հոգում են անդամ պետությունները:

### ԲԱԺԻՆ 9. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### ՀՈՂՎԱԾ 41

Սույն Կանոնադրությունը հիմնադիր պետությունների կողմից ենթակա է վավերացման, նրանց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան:

Վավերագրերը ի պահ են հանձնվում Բելառուսի Հանրապետության Կառավարությանը, որը յուրաքանչյուր ի պահ տրված վավերագրի մասին կձանուցի մյուս հիմնադիր պետություններին:

Սույն Կանոնադրությունը բոլոր հիմնադիր պետությունների համար ուժի մեջ է մտնում բոլոր հիմնադիր պետությունների կողմից վավերագրերի ի պահ հանձնման օրվանից կամ իրենց վավերագրերը հանձնած հիմնադիր պետությունների համար՝ սույն Կանոնադրությունն ընդունելուց մեկ տարի հետո:

#### ՀՈՂՎԱԾ 42

Սույն Կանոնադրության մեջ ուղղումներ կարող են առաջարկվել ցանկացած անդամ պետության կողմից: Առաջարկված ուղղումները քննության են առնվում պետությունների ղեկավարների Խորհրդի ընթացակարգային կանոններին համապատասխան:

Սույն Կանոնադրության ուղղումներն ընդունում է պետությունների ղեկավարների Խորհուրդը: Դրանք ուժի մեջ են մտնում բոլոր անդամ պետությունների կողմից իրենց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան վավերացնելուց հետո Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից վերջին վավերագիրը ստանալու օրվանից:

#### ՀՈՂՎԱԾ 43

Համագործակցության հիմնադիր պետությունները կարող են սույն Կանոնադրության վավերացման ժամանակ 3-րդ, 4-րդ եւ 7-րդ բաժինների եւ 28-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ հոդվածների վերաբերյալ վերապահումներ եւ հայտարարություններ կատարել:

#### ՀՈՂՎԱԾ 44

Սույն Կանոնադրությունը կգրանցվի Միավորված ազգերի կազմակերպության

Կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան:

#### ՅՈՒՎԱԾ 45

Սույն Կանոնադրությունը կազմված է մեկ օրինակով՝ Համագործակցության հիմնադիր պետությունների պետական լեզուներով: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը բոլոր հիմնադիր պետություններին կուղարկի դրա հաստատված պատճենները:

Սույն Կանոնադրությունը ընդունվել է 1993 թվականի հունվարի 22-ին՝ Մինսկում կայացած պետությունների ղեկավարների հորհրդի նիստի ժամանակ:

\* Կանոնադրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի մարտի 16-ից: